

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**



ՎԱՐԿ ԹԻՎ 9503-AM

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման քաղաքականության վարկ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

ՄԻՋԵՎ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ թվագրված 2023թ. ապրիլի 4-ով, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) և ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ Ու ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ (Բանկ) միջև, Ծրագրին (սահմանված է սույն համաձայնագրին կից հավելվածում) աջակցելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով: Բանկը որոշում է կայացրել տրամադրել այս ֆինանսավորումը, այդ թվում՝ հետևյալ հիմքերով՝ i) գործողություններ, որոնք Վարկառուն արդեն իսկ ձեռնարկել է Ծրագրի շրջանակներում, եւ որոնք նկարագրված են սույն համաձայնագրի Առդիր 1-ի Բաժին I-ում, եւ ii) Վարկառուի կողմից մակրոտնտեսական քաղաքականության համարժեք համակարգի վարում: Վարկառուն եւ Բանկը սույնով համաձայնել են հետևյալի շուրջ.

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված է սույն համաձայնագրին կից հավելվածում) տարածվում են սույն համաձայնագրի նկատմամբ եւ դրա բաղկացուցիչ մասն են կազմում:
- 1.02. Եթե համատեքստի շրջանակներում այլ բան չի պահանջվում, սույն համաձայնագրում մեծատառով օգտագործված հասկացություններն ունեն Ընդհանուր պայմաններում կամ սույն համաձայնագրին կից հավելվածում դրանց վերագրված իմաստները:

ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԸ

- 2.01. Բանկը համաձայնում է Վարկառուին տրամադրել ինսուսներկու միլիոն երեք հարյուր հազար եվրո (€92,300,000) գումար, որը ժամանակ առ ժամանակ կարող է փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով (Վարկ):
- 2.02. Սկզբնավճարը հավասար է Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին

(0.25%):

- 2.03. Պարտավճարը հավասար է Վարկի չառհանված մնացորդի տարեկան մեկ քառորդ տոկոսին (0.25%):
- 2.04. Տոկոսադրույքը հավասար է Բազային դրույքաչափի եւ Փոփոխական սպրեդի գումարին կամ Փոխարկումից հետո կիրառելի հավանական այն դրույքաչափին, որը հաշվարկվում է Ընդհանուր պայմանների Բաժին 3.02-ի (ե) կետով նախատեսված կարգով:
- 2.05. Վարկառուն ընտրում է Վարկի նկատմամբ դրույքաչափի ավտոմատ ֆիքսման փոխարկման կիրառումը: Համապատասխանաբար, չսահմանափակելով Ընդհանուր պայմանների IV հոդվածի դրույթները, եւ եթե Վարկառուն այլ բան չի ծանուցել Բանկին Փոխարկման ուղեցույցի դրույթներին համապատասխան, Վարկի գումարի հաջորդական առհանումների նկատմամբ կիրառվող բազային տոկոսադրույքը, որն ընդհանուր վերցրած հավասար է կամ գերազանցում է իննսուն միլիոն եվրոն, պետք է փոխարկվի նախնական Փոփոխական դրույքաչափը, որը հիմնված է Բազային դրույքաչափի եւ Փոփոխական սպրեդի վրա, պետք է փոխարկվի Փոփոխական դրույքաչափի՝ հիմնված Ֆիքսված բազային դրույքաչափի եւ Փոփոխական սպրեդի վրա Ընդհանուր պայմանների IV հոդվածով եւ Փոխարկման ուղեցույցով նախատեսված կարգով՝ այդ գումարների լիարժեք մարման նպատակով:
- 2.06. Վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ը եւ դեկտեմբերի 15-ը:
- 2.07. Վարկի մայր գումարը մարվում է սույն համաձայնագրի Առդիր 2-ով սահմանված կարգով:
- 2.08. Չսահմանափակելով Ընդհանուր պայմանների Բաժին 5.05-ի դրույթները՝ Վարկառուն անհապաղ Բանկ է ներկայացնում Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ ողջամտության սահմաններում պահանջվող

տեղեկություններ, որոնք վերաբերում են այս II հոդվածի դրույթներին:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐԸ

3.01. Վարկառուն հայտարարում է այս Ծրագրի եւ դրա իրականացման մասով իր հանձնառության մասին: Այդ նպատակով եւ Ընդհանուր պայմանների Բաժին 5.05-ին համապատասխան՝

- ա) Վարկառուն եւ Բանկը ժամանակ առ ժամանակ կողմերից որեւէ մեկի պահանջով պետք է տեսակետներ փոխանակեն Վարկառուի մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի եւ Ծրագրի իրականացման մասով գրանցած առաջընթացի վերաբերյալ,
- բ) նախքան տեսակետների փոխանակումը Վարկառուն պետք է Բանկի դիտարկմանն ու մեկնաբանմանը ներկայացնի Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն՝ Բանկի կողմից ողջամտության սահմաններում պահանջվող մանրամասնությամբ, եւ
- գ) չսահմանափակելով այս Բաժնի (ա) եւ (բ) կետերը՝ Վարկառուն պետք է անհապաղ Բանկին տեղյակ պահի ցանկացած այնպիսի իրավիճակի մասին, որը կարող է էական անբարենպաստ ազդեցություն ունենալ Ծրագրի նպատակների վրա, կամ պետք է տեղյակ պահի Ծրագրի շրջանակներում ձեռնարկված ցանկացած գործողության, այդ թվում՝ սույն համաձայնագրի Առդիր 1-ի Բաժին 1-ում նշված գործողության մասին:

ՀՈԴՎԱԾ IV. ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.01. Կասեցման լրացուցիչ դեպքերը բաղկացած են հետեւյալից, մասնավորապես, եթե առաջացել է մի իրավիճակ, որն անհնարին կդարձնի Ծրագրի կամ դրա էական մասի իրականացումը:

4.02. Արագացման լրացուցիչ դեպքը բաղկացած է հետեւյալից,

մասնավորապես, եթե տեղ է գտել սույն համաձայնագրի Բաժին 4.01-ում նշված որեւէ իրադարձություն, եւ այն շարունակվում է Բանկի կողմից այդ մասին Վարկառուին ծանուցելուց հետո վաթսուն (60) օրվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ V. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

- 5.01. Ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայմանը, համաձայն Ընդհանուր պայմանների IX Հոդվածի, բաղկացած է հետեւյալից եւ մասնավորապես, եթե Բանկին բավարարում է Ծրագրի իրականացման ընթացքում Վարկառուի գրանցած առաջընթացը եւ Վարկառուի մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի համարժեքությունը:
- 5.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը ստորագրման օրվան հաջորդող իննսուներորդ (90) օրն է:

ՀՈԴՎԱԾ VI. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ, ՀԱՍՑԵՆԵՐԸ

- 6.01. Վարկառուի ներկայացուցիչը ֆինանսների նախարարն է:
- 6.02. Ընդհանուր պայմանների Բաժին 10.01-ի նպատակներով՝
- ա) Վարկառուի հասցեն է՝
Ֆինանսների նախարարություն
Հայաստանի Հանրապետություն
ք. Երեւան, 0010
Կառավարության շենք 1
Մելիք-Աղամյան փողոց 1
եւ
 - բ) Վարկառուի էլեկտրոնային հասցեն է՝
Ֆաքս՝
+374-11-800132
- 6.03. Ընդհանուր պայմանների Բաժին 10.01-ի նպատակներով՝
- ա) Բանկի հասցեն է՝
International Bank for Reconstruction and Development
1818 H Street, N.W.
Washington, D.C. 20433
United States of America; and
 - բ) Բանկի էլեկտրոնային հասցեն է՝

Տելեքս՝ Ֆաքս՝
248423(MCI) կամ 1-202-477-6391
64145(MCI)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է ստորագրման օրվա դրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Լիազոր ներկայացուցիչ

Անուն՝ Վահե Հովհաննիսյան

Պաշտոն՝ ՀՀ ֆինանսների նախարար

Ամսաթիվ՝ 2023թ. ապրիլի 4

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ՝

Լիազոր ներկայացուցիչ

Անուն՝ Կարոլին Գեգինատ

Պաշտոն՝ ՀԲ Հայաստանի գրասենյակի ղեկավար

Ամսաթիվ՝ 2023թ. ապրիլի 4

ԱՌԴԻՐ 1

Ծրագրի գործողությունները, Վարկային միջոցների առկայությունը

Բաժին I. Ծրագրով նախատեսված գործողությունները

Ծրագրի շրջանակներում Վարկառուի կողմից ձեռնարկվող գործողությունները ներառում են հետևյալը.

1. Կլիմայի փոփոխության մեղմացման եւ հարմարվողականության խթանում, եւ շրջակա միջավայրի կառավարման համար կարգավորող շրջանակի բարելավում

1. Հանրային ներդրումների կառավարման համակարգն ամրապնդելու ու կլիմայական ուղղվածությունն ընդլայնելու նպատակով Վարկառուն Կառավարության միջոցով ընդունել է կլիմայի փոփոխության սքրինինգի պահանջներ, որոնք համապատասխանում են հանրային ներդրումային ծրագրերի մասով միջազգային չափանիշներին՝ նախքան Ներդրումային հարցերով պետական կոմիտեի հաստատումը ստանալը (ինչի մասին վկայում է ՀՀ վարչապետի կողմից ստորագրված՝ ՀՀ կառավարության 2023 թ. փետրվարի 9-ի թիվ 175-Ն որոշումը, որը հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում 2023 թ. փետրվարի 10-ին):

2. Էներգաարդյունավետությունը խթանելու նպատակով Վարկառուն Կառավարության միջոցով հաստատել է՝ ա) 2022-2030թթ. Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի ծրագիրը, որը կարգավորում է 2022-2030թթ. Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկ քաղաքականության ուղղությունները, նպատակներն ու թիրախները, ինչպես նաեւ հաստատել է Գործողությունների ծրագիր, այդ թվում՝ սահմանված թիրախների իրագործումն ապահովող միջոցառումներ, եւ բ) հավանություն է տվել բազմաբնակարան շենքերի եւ առանձնատների էներգաարդյունավետ վերանորոգմանն օժանդակության ծրագրին, որը սահմանում է դիմելու պայմաններն ու տրամադրվող աջակցության չափը (Վարկի պայմանները), իրականացման կարգը (ինչի մասին վկայում է ա) ՀՀ

կառավարության 2022 թ. մարտի 24-ի թիվ 398-Լ որոշումը, որը հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում 2022 թ. մարտի 26-ին, եւ բ) i) 2022թ. ապրիլի 15-ի թիվ 520-Լ որոշումը՝ համապատասխան փոփոխություններով, որը հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում 2022թ. ապրիլի 19-ին, ii) 2022 թ. մայիսի 26-ի թիվ 775-Լ որոշումը, որը հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում 2022 թ. մայիսի 30-ին, եւ iii) 2022թ. սեպտեմբերի 22-ի թիվ 1459-Լ որոշումը, որը հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում 2022 թ. սեպտեմբերի 22-ին):

3. Մթնոլորտային օդի աղտոտվածության մոնիթորինգը բարելավելու նպատակով Վարկառուն Կառավարության միջոցով հաստատել եւ ՀՀ Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացրել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները, որոնք կապահովեն մթնոլորտային օդի աղտոտման եւ ջերմոցային գազերի մոնիթորինգի, հանրությանը տեղեկատվություն տրամադրելու իրավական դաշտը՝ կլիմայական, առողջական, սոցիալական եւ բարօրության կարիքներին համապատասխան (ինչի մասին վկայում է ՀՀ վարչապետի կողմից ստորագրված՝ ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ի թիվ 1122-Ա որոշումը, որը հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջում՝ ուժի մեջ մտնելով 2022 թ. հուլիսի 22-ին):
4. Պլանավորված տնտեսական գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի եւ մարդկանց առողջության վրա արդյունավետորեն կանխելու եւ նվազեցնելու նպատակով Վարկառուն Կառավարության միջոցով հաստատել եւ Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացրել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները, որոնք սահմանում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ենթակա գործունեության տեսակներն ու

գնահատման շրջանակը, ինչպես նաև վերանայման գործընթացի համար պատասխանատու հաստատությունները (ինչի մասին վկայում է ՀՀ վարչապետի կողմից ստորագրված՝ ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 9-ի թիվ 157-Ա որոշումը, որը հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջում 2023 թ. փետրվարի 10-ին):

2. Հավասարության ամրապնդում եւ մարդկային կապիտալի զարգացման խթանում

5. Սոցիալական աջակցության հասցեականությունը բարելավելու նպատակով Վարկառուն Կառավարության միջոցով հաստատել է ՀՀ կառավարության 2021-2026 թթ. Գործողությունների ծրագիրը, որը ներառում է աջակցություն ընտանիքի անապահովության գնահատման նոր համակարգի գործարկմանը (ինչի մասին վկայում է ՀՀ վարչապետի կողմից ստորագրված՝ ՀՀ կառավարության 2021 թ. նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշումը, որը հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջում 2021 թ. նոյեմբերի 24-ին):

6. Կրթության համակարգում ուսումնառության վերջնարդյունքները բարելավելու նպատակով Վարկառուն Կառավարության միջոցով հաստատել է ՀՀ ազգային ժողովի հաստատմանն է ներկայացրել ծրագիր, որը ռազմավարական ուղղություններով նախատեսված գործողությունների շարքում ներառում է ուսումնառության վերջնարդյունքներով ղեկավարվող՝ կարողունակությունների վրա հիմնված նոր առարկայական ծրագիր՝ կենտրոնանալով ԲՃՏՄ առարկաների, կանաչ կրթության եւ օտար լեզուների ուղղվածությամբ կրթության ամրապնդման վրա (ինչի մասին վկայում է ՀՀ փոխվարչապետի կողմից ստորագրված՝ ՀՀ կառավարության 2022 թ. հուլիսի 28-ի թիվ 1174-Ա որոշումը, որը հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջում 2022 թ. օգոստոսի 3-ին):

3. Հակակոռուպցիոն շրջանակի եւ արդարադատության ոլորտի արդյունավետության հզորացում

7. Պետական սուբսիդիաների հակամրցակցային ազդեցությունը սահմանափակելու նպատակով, միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ Վարկառուն Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի միջոցով հաստատել է պետական օժանդակության գնահատման համար կիրառվելիք կանոնները, այդ թվում՝ i) վերլուծական քայլեր, որոնք անհրաժեշտ են մրցակցությունը խաթարող պետական օժանդակությունը պարզելու համար, եւ ii) կատեգորիաներ ու պայմաններ, որոնց դեպքում մրցակցությունը խաթարող պետական օժանդակությունը կարող է տրամադրվել, այդ թվում՝ բնապահպանական նկատառումներով (ինչի մասին վկայում է «Պետական օժանդակության գնահատման կանոնները սահմանելու եւ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի թիվ 393-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021թ. դեկտեմբերի 28-ի թիվ 270-Ն որոշումը՝ թվագրված 2022թ. հուլիսի 26-ով, որն ուժի մեջ է մտել 2022 թ. օգոստոսի 1-ին եւ հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջում 2022 թ. հուլիսի 29-ին):

8. Հակակոռուպցիոն ռազմավարությունը եւ դատական ոլորտի բարեփոխումների ռազմավարությունն իրականացնելու նպատակով Վարկառուն Կառավարության միջոցով Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացրել՝ ա) «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները, որոնց նպատակն է բարելավել հաղորդում, այդ թվում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին հաղորդում ներկայացնելու ուղիները, եւ ապահովել պաշտպանության ավելի լայն մեխանիզմներ կոռուպցիոն իրավիճակների մասին հաղորդում տվող անձանց համար, բ) «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները, որոնց

նպատակն է բարելավել հանրային ծառայողների ստացած նվերների մասին հաղորդում ներկայացնելը եւ մոնիթորինգը, եւ գ) «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները, որոնց նպատակն է բարեփոխել հաշտարարության համակարգը եւ պարտադիր հաշտարարության կարգավորումներ սահմանել որոշակի տեսակի գործերի համար (ինչի մասին վկայում է՝ ա) ՀՀ վարչապետի կողմից ստորագրված՝ ՀՀ կառավարության 2022 թ. օգոստոսի 11-ի թիվ 1246-Ա որոշումը, որը հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջում 2022 թ. օգոստոսի 12-ին, եւ բ) ՀՀ վարչապետի կողմից ստորագրված՝ ՀՀ կառավարության 2022 թ. օգոստոսի 18-ի թիվ 1299-Ա որոշումը, որը հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջում 2022 թ. օգոստոսի 19-ին, եւ գ) ՀՀ վարչապետի կողմից ստորագրված՝ ՀՀ կառավարության 2022 թ. հունիսի 2-ի թիվ 795-Ա որոշումը, որը հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում 2022 թ. հունիսի 3-ին):

Բաժին II. Վարկային միջոցների առկայությունը

Ա. Ընդհանուր դրույթներ. Վարկառուն կարող է Վարկի միջոցներն առհանել այս Բաժնի դրույթներին եւ այնպիսի լրացուցիչ հրահանգներին համապատասխան, որոնք սահմանվում են Բանկի կողմից Վարկառուին ուղարկվող ծանուցման շրջանակներում:

Բ. Վարկի գումարների տեղաբաշխումը. Վարկը տեղաբաշխվում է՝ մեկ առհանման տրանշով, որից Վարկառուն կարող է առհանումներ կատարել Վարկային միջոցներից: Այս նպատակով Վարկի գումարների տեղաբաշխումը ներկայացված է ստորեւ նշված աղյուսակում.

Տեղաբաշխումներ	Տեղաբաշխված Վարկի գումար (արտահայտված եվրոյով)
(1) Մեկ առհանման տրանշ	92,300,000

Տեղաբաշխումներ	Տեղաբաշխված Վարկի գումար (արտահայտված եվրոյով)
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	92,300,000

Գ. Առհանման տրանշի տրամադրման պայմանները

Առհանում չի կարող կատարվել Մեկ առհանման տրանշից, եթե Բանկին չբավարարի՝ ա) Վարկառուի կողմից իրականացվող Ծրագիրը, եւ բ) Վարկառուի մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի համարժեքությունը:

Դ. Վարկի գումարների դեպոզիտը

Վարկառուն վարկային հաշվից Վարկի առհանումից հետո երեսուն (30) օրվա ընթացքում պետք է Բանկին հաղորդի՝ ա) Ընդհանուր պայմանների Բաժին 2.03-ի (ա) կետում հիշատակված հաշվին ստացված կոնկրետ գումարը, բ) այն հաշվի մանրամասները, որին փոխանցվելու է Վարկային միջոցներին համարժեք գումարը դրամով, գ) արձանագրություն առ այն, որ համարժեք գումարը հաշվառվել է Վարկառուի բյուջետային կառավարման համակարգերում, եւ դ) Ընդհանուր պայմանների Բաժին 2.03-ի (ա) կետում նշված հաշվին ստացականների եւ մասհանումների անդորրագրերը:

Ե. Փակման ամսաթիվը. Փակման ամսաթիվը 2024թ. մարտի 29-ն է:

ԱՌԴԻՐ 2

Պարտավորության մասով պարբերական մարումների ժամանակացույց

Ստորեւ ներկայացված աղյուսակում սահմանված են Վարկի մայր գումարի վճարումների ամսաթվերը եւ Մայր գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին Վարկի վճարման ենթակա ընդհանուր մայր գումարի տոկոսը (հերթական վճարման մասը):

Մայր գումարի հավասարաչափ մարումներ

Մայր գումարի վճարման ամսաթիվ	Մասնակի մարման մասնաբաժին
Յուրաքանչյուր հունիսի 15-րդ եւ դեկտեմբերի 15-րդ օրը՝ Սկսած՝ 2028թ. հունիսի 15-ից Մինչեւ՝ 2041թ. հունիսի 15-ը	3.57%
2041թ. դեկտեմբերի 15-ին	3.61%

ՀԱՎԵԼՎԱԾ

Հիմնական հասկացությունները

1. «Հակակոռուպցիոն ռազմավարություն»՝ Վարկառուի 2019-2022 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարությունը եւ դրա Գործողությունների ծրագիրը, որն ընդունվել է Վարկառուի՝ 2019 թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշմամբ:
2. «Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ»՝ Վարկառուի պաշտոնական միասնական համացանցային կայքէջը, որտեղ հրապարակվում են նորմատիվ իրավական ակտերը:
3. «Մրցակցության պաշտպանության հանձնաժողով»՝ Վարկառուի տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականությունն իրականացնող Վարկառուի հանձնաժողովը, որը ստեղծվել է 2000 թ. դեկտեմբերի 5-ի թիվ ՀՕ-112 օրենքին համապատասխան, կամ հանձնաժողովի՝ Բանկի համար ընդունելի իրավահաջորդը:
4. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով»՝ Վարկառուի հանձնաժողովը, որը ստեղծվել է 2019թ.նոյեմբերի 20-ի ամսաթվով թվագրված թիվ ՀՕ-96-Ն օրենքին համապատասխան:
5. «Փոխվարչապետ»՝ Վարկառուի փոխվարչապետը:
6. «Դրամ»՝ Վարկառուի օրինական արժույթ:
7. «Ընդհանուր պայմաններ»՝ «Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի՝ ՎՋԵԲ ֆինանսավորման, զարգացման քաղաքականության ֆինանսավորման ընդհանուր պայմանները»՝ թվագրված 2018 թ. դեկտեմբերի 14-ով (վերանայվել է 2020 թ. օգոստոսի 1-ին, 2020թ. դեկտեմբերի 21-ին, 2021 թ. ապրիլի 1-ին եւ 2022 թ. հունվարի 1-ին):
8. «Կառավարություն»՝ Վարկառուի վարչապետը, փոխվարչապետները եւ նախարարները:

9. «Դատական համակարգի բարեփոխման ռազմավարություն»՝ Վարկառուի Դատաիրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարությունը, որն ընդունվել է Վարկառուի 2022 թ. հուլիսի 21-ի թիվ 1133-Լ որոշման համաձայն:
10. «Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք»՝ Վարկառուի թիվ ՀՕ-121-Ն օրենքը, որն ընդունվել է 1994 թ. հոկտեմբեր 11-ին:
11. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին օրենք»՝ Վարկառուի թիվ ՀՕ-110-Ն օրենքը, որն ընդունվել է 2014 թ. հունիսի 21-ին:
12. «Հաշտարարության մասին օրենք»՝ Վարկառուի թիվ ՀՕ-351-Ն օրենքը թվագրված 2018թ. հուլիսի 5-ով:
13. «Հանրային ծառայության մասին օրենք»՝ Վարկառուի թիվ ՀՕ-206-Ն օրենքը թվագրված 2018թ. ապրիլի 9-ով:
14. «Ազդարարման համակարգի մասին օրենք»՝ Վարկառուի թիվ ՀՕ-97-Ն օրենքը թվագրված 2018թ. հունվարի 1-ով:
15. «Վարչապետ»՝ Վարկառուի վարչապետը:
16. «Ծրագիր»՝ Բանկին ուղղված Վարկառուի 2023թ. փետրվարի 23-ի գրության մեջ նշված խնդիրների, քաղաքականության ուղղությունների եւ գործողությունների ծրագիրը, որով ճանաչվում է Ծրագրի իրականացման նկատմամբ Վարկառուի հանձնառությունը, եւ աջակցություն է հայցվում Բանկից՝ ի օժանդակություն Ծրագրի իրականացման՝ վերջինիս կիրարկման ընթացքում, եւ որը բաղկացած է ձեռնարկվող գործողություններից, այդ թվում՝ սույն համաձայնագրի Առդիր1-ի Բաժին I-ով սահմանված, եւ ծրագրի նպատակներին համահունչ ձեռնարկվելիք գործողություններից:
17. «Հանրային ներդրումների կոմիտե»՝ 2023 թ. փետրվարի 9-ին ընդունված թիվ 175-Ն որոշմամբ ստեղծված Վարկառուի կոմիտեն կամ վերջինիս այն

իրավահաջորդը, որն ընդունելի է Բանկի համար:

18. «Ստորագրման ամսաթիվ»՝ երկու ամսաթվերից ամենավերջինը, երբ Վարկառուն եւ Բանկը ստորագրել են սույն համաձայնագիրը, եւ այս սահմանումը տարածվում է Ընդհանուր պայմանների շրջանակներում «Վարկային համաձայնագրի ամսաթվին» կատարված բոլոր հղումներին:
19. «Մեկ առհանման տրանշ»՝ Վարկի գումարը, որը հատկացված է սույն համաձայնագրի Առդիր 1-ի Բաժին II-ի «Բ» մասում բերված աղյուսակում «Մեկ առհանման տրանշ» խորագրով կատեգորիային:
20. «ԲՏՃՄ»՝ բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն եւ մաթեմատիկա:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ՝**



[Handwritten signature]
Նելլի Սարոյան

LOAN NUMBER 9503-AM

Loan Agreement

(Green, Resilient and Inclusive Development Policy Loan)

between

REPUBLIC OF ARMENIA

and

INTERNATIONAL BANK FOR RECONSTRUCTION
AND DEVELOPMENT

LOAN AGREEMENT

AGREEMENT dated as of the *April 4*, 2023 between REPUBLIC OF ARMENIA (“Borrower”) and INTERNATIONAL BANK FOR RECONSTRUCTION AND DEVELOPMENT (“Bank”) for the purpose of providing financing in support of the Program (as defined in the Appendix to this Agreement). The Bank has decided to provide this financing on the basis, inter alia, of: (i) the actions which the Borrower has already taken under the Program and which are described in Section I of Schedule 1 to this Agreement; and (ii) the Borrower’s maintenance of an adequate macroeconomic policy framework. The Borrower and the Bank therefore hereby agree as follows:

ARTICLE I — GENERAL CONDITIONS; DEFINITIONS

- 1.01. The General Conditions (as defined in the Appendix to this Agreement) apply to and form part of this Agreement.
- 1.02. Unless the context requires otherwise, the capitalized terms used in this Agreement have the meanings ascribed to them in the General Conditions or in the Appendix to this Agreement.

ARTICLE II — LOAN

- 2.01. The Bank agrees to lend to the Borrower the amount of ninety-two million three hundred thousand Euros (€92,300,000), as such amount may be converted from time to time through a Currency Conversion (“Loan”).
- 2.02. The Front-end Fee is one quarter of one percent (0.25%) of the Loan amount.
- 2.03. The Commitment Charge is one quarter of one percent (0.25%) per annum on the Unwithdrawn Loan Balance.
- 2.04. The interest rate is the Reference Rate plus the Variable Spread or such rate as may apply following a Conversion; subject to Section 3.02(e) of the General Conditions.
- 2.05. The Borrower elects to apply the Automatic Rate Fixing Conversion to the Loan. Accordingly, without limitation upon the provisions of Article IV of the General Conditions and unless otherwise notified by the Borrower to the Bank in accordance with the provisions of the Conversion Guidelines, the interest rate basis applicable to consecutive withdrawals from the Loan Account which in the aggregate equal or exceed €90,000,000 shall be converted from the initial Variable Rate based on a Reference Rate and the Variable Spread to a Variable Rate based on a Fixed Reference Rate and the Variable Spread for the full maturity of such amount in accordance with the provisions of Article IV of the General Conditions and of the Conversion Guidelines.

- 2.06. The Payment Dates are June 15 and December 15 in each year.
- 2.07. The principal amount of the Loan shall be repaid in accordance with Schedule 2 to this Agreement.
- 2.08. Without limitation upon the provisions of Section 5.05 of the General Conditions, the Borrower shall promptly furnish to the Bank such information relating to the provisions of this Article II as the Bank may, from time to time, reasonably request.

ARTICLE III — PROGRAM

- 3.01. The Borrower declares its commitment to the Program and its implementation. To this end, and further to Section 5.05 of the General Conditions:
 - (a) the Borrower and the Bank shall from time to time, at the request of either party, exchange views on the Borrower's macroeconomic policy framework and the progress achieved in carrying out the Program;
 - (b) prior to each such exchange of views, the Borrower shall furnish to the Bank for its review and comment a report on the progress achieved in carrying out the Program, in such detail as the Bank shall reasonably request; and
 - (c) without limitation upon paragraph (a) and (b) of this Section, the Borrower shall promptly inform the Bank of any situation that would have the effect of materially reversing the objectives of the Program or any action taken under the Program including any action specified in Section I of Schedule 1 to this Agreement.

ARTICLE IV — REMEDIES OF THE BANK

- 4.01. The Additional Event of Suspension consists of the following, namely, that a situation has arisen which shall make it improbable that the Program, or a significant part of it, will be carried out.
- 4.02. The Additional Event of Acceleration consists of the following, namely, that the event specified in Section 4.01 of this Agreement occurs and is continuing for a period of sixty (60) days after notice of the event has been given by the Bank to the Borrower.

ARTICLE V — EFFECTIVENESS; TERMINATION

- 5.01. The Additional Condition of Effectiveness, in accordance with Article IX of the General Conditions, consists of the following, namely, that the Bank is satisfied with the progress achieved by the Borrower in carrying out the Program and with the adequacy of the Borrower's macroeconomic policy framework.
- 5.02. The Effectiveness Deadline is the date ninety (90) days after the Signature Date.

ARTICLE VI — REPRESENTATIVE; ADDRESSES

- 6.01. The Borrower's Representative is its Minister of Finance.
- 6.02. For purposes of Section 10.01 of the General Conditions:

(a) the Borrower's address is:

Ministry of Finance
Melik-Adamian St. 1
Yerevan 0010
Republic of Armenia; and

(b) the Borrower's Electronic Address is:

Facsimile:
+374-11-800132

- 6.03. For purposes of Section 10.01 of the General Conditions:

(a) the Bank's address is:

International Bank for Reconstruction and Development
1818 H Street, N.W.
Washington, D.C. 20433

United States of America; and

(b) the Bank's Electronic Address is:

Telex:

Facsimile:

248423(MCI) or
64145(MCI)

1-202-477-6391

AGREED as of the Signature Date.

REPUBLIC OF ARMENIA

By



Authorized Representative

Name: Vahé Hovhannisyán

Title: Minister of Finance

Date: April 4, 2023

**INTERNATIONAL BANK FOR
RECONSTRUCTION AND DEVELOPMENT**

By



Authorized Representative

Name: Carolin Geginat

Title: Country Manager

Date: April 4, 2023

SCHEDULE 1

Program Actions; Availability of Loan Proceeds

Section I. Actions taken under the Program

The actions taken by the Borrower under the Program include the following:

1. **Fostering climate change mitigation and adaptation, and improving the regulatory framework for environmental management**
 1. To strengthen the public investment management system and enhance climate focus, the Borrower, through the Government, has issued climate change screening requirements consistent with international standards for public investment projects prior to Public Investment Committee approval (as evidenced by Government Decree No. 175-N, dated February 9, 2023, signed by the Prime Minister, published in the Armenian Legal Information System on February 10, 2023).
 2. To promote energy efficiency, the Borrower, through the Government, has: (a) approved the Program on Energy Saving and Renewable Energy for 2022-2030 that regulates directions, goals and targets of energy saving and renewable energy policies for 2022-2030, as well as an action plan including measures to ensure achievement of the set targets; and (b) approved a program to support energy-efficient renovation of apartments and dwelling houses, which defines the rules on eligibility and support amount, loan terms, and the implementation procedure (as evidenced by: (a) Government Decision No. 398-L, dated March 24, 2022, published in the Armenian Legal Information System on March 26, 2022; and (b) (i) Decree No. 520-L, dated April 15, 2022 as amended, published in the Armenian Legal Information System on April 19, 2022; and (ii) Decree No. 775-L, dated May 26, 2022, published in the Armenian Legal Information System on May 30, 2022; and (iii) Decree No. 1459-L, dated September 22, 2022, published in the Armenian Legal Information System on September 22, 2022).
 3. To improve the monitoring of atmospheric air pollution, the Borrower, through the Government, has approved and submitted for approval by the National Assembly an amendment to the Law on Atmospheric Air Protection to provide the framework for monitoring atmospheric air pollution and green-house gases, and sharing information with the public, consistent with climate, health, social and welfare needs (as evidenced by Government Decree No. N-1122-A, dated July 21, 2022, signed by the Prime Minister, published in the Armenian Legal Information System website, effective on July 22, 2022).

4. To effectively prevent and reduce the impact of planned economic activities on the environment and human health, the Borrower, through the Government, has approved and submitted for approval by the National Assembly an amendment to the Law on Environmental Impact Assessment and Expert Appraisal, which defines the activities subject to, and the scope of, environmental impact assessments, and the institutions responsible for the review process (as evidenced by Government Decree No. 157-A, dated February 9, 2023, signed by the Prime Minister, published in the Armenian Legal Information System website on February 10, 2023).

2. Enhancing equity and promoting human capital development

5. To improve the targeting of social assistance, the Borrower, through the Government, has approved the 2021-2026 Action Plan of the Government of the Republic of Armenia, which includes an action supporting the deployment of a new family vulnerability assessment system (as evidenced by Government Decree 1902-L, dated November 18, 2021, signed by the Prime Minister, published in the Armenian Legal Information System website on November 24, 2021).
6. To improve learning outcomes in the education system, the Borrower, through the Government, has approved and submitted for approval by the National Assembly a program which includes among its strategic areas actions the adoption of a new competency-based curriculum guided by learning outcomes, with a focus on strengthening STEM subjects, green education and foreign languages (as evidenced by Government Decree No. 1174-A, dated July 28, 2022, signed by the Deputy Prime Minister, published in the Armenian Legal Information System website on August 3, 2022).

3. Strengthening the anti-corruption framework and justice sector efficiency

7. To limit anticompetitive effects of state subsidies in a manner consistent with good international practices, the Borrower, through the Competition Protection Commission, has approved rules that it will apply for the evaluation of state aid, including: (i) the analytical steps required to identify distortive state aid, and (ii) the categories and conditions under which distortive state aid can be granted, including environmental reasons (as evidenced by Competition Protection Commission Resolution No. 270-N on Defining the Rules of Evaluation of State Aid and Revoking Resolution No. 393-N of the Competition Protection Commission of December 28, 2021, dated July 26, 2022, effective on August 1, 2022, published in the Armenian Legal Information System website on July 29, 2022).

8. To implement its Anti-Corruption Strategy and its Justice Sector Reform Strategy, the Borrower, through the Government, has submitted for approval by the National Assembly: (a) amendments to the Law on the Whistleblowing System, which aim to improve the reporting channels, including to the Corruption Prevention Commission, and ensure a broader range of protection mechanisms for people reporting corruption situations; (b) amendments to the Law on Public Service, which aim to improve reporting and monitoring of gifts received by public servants; and (c) amendments to the Law on Mediation, which aim to reform the mediation system and establish mandatory mediation regulations for certain types of cases (as evidenced by: (a) Government Decree No. 1246-A, signed by the Prime Minister, dated August 11, 2022, published in the Armenian Legal Information System website on August 12, 2022; (b) Government Decree No. 1299-A dated August 18, 2022, signed by the Prime Minister, published in the Armenian Legal Information System website on August 19, 2022; and (c) Government Decree No. 795-A dated June 2, 2022, signed by the Prime Minister, published in the Armenian Legal Information System website on June 3, 2022).

Section II. Availability of Loan Proceeds

- A. General.** The Borrower may withdraw the proceeds of the Loan in accordance with the provisions of this Section and such additional instructions as the Bank may specify by notice to the Borrower.
- B. Allocation of Loan Amounts.** The Loan is allocated in a single withdrawal tranche, from which the Borrower may make withdrawals of the Loan proceeds. The allocation of the amounts of the Loan to this end is set out in the table below:

Allocations	Amount of the Loan Allocated (expressed in EUR)
(1) Single Withdrawal Tranche	92,300,000
TOTAL AMOUNT	92,300,000

D. Withdrawal Tranche Release Conditions

No withdrawal shall be made of the Single Withdrawal Tranche unless the Bank is satisfied: (a) with the Program being carried out by the Borrower; and (b) with the adequacy of the Borrower's macroeconomic policy framework.

E. Deposit of Loan Amounts

The Borrower, within thirty (30) days after the withdrawal of the Loan from the Loan Account, shall report to the Bank: (a) the exact sum received into the account referred to in Section 2.03 (a) of the General Conditions; (b) the details of the account to which the Drams equivalent of the Loan proceeds will be credited; (c) the record that an equivalent amount has been accounted for in the Borrower's budget management systems; and (d) the statement of receipts and disbursement of the account referred to in Section 2.03 (a) of the General Conditions.

F. Closing Date. The Closing Date is March 29, 2024.

SCHEDULE 2

Commitment-Linked Amortization Repayment Schedule

The following table sets forth the Principal Payment Dates of the Loan and the percentage of the total principal amount of the Loan payable on each Principal Payment Date (“Installment Share”).

Level Principal Repayments

Principal Payment Date	Installment Share
On each June 15 and December 15 Beginning June 15, 2028 through June 15, 2041	3.57%
On December 15, 2041	3.61%

APPENDIX

Definitions

1. “Anti-Corruption Strategy” means the Borrower’s 2019-2022 Strategy on Anti-Corruption and its action plan, adopted pursuant to the Borrower’s Decision No. 1332-N of October 3, 2019.
2. “Armenian Legal Information System” means the Borrower’s official unified Internet website for publication of normative legal acts.
3. “Competition Protection Commission” means the Borrower’s commission responsible for implementing the Borrower’s policy in economic competition protection, established pursuant to Law No. HO-112, dated December 5, 2000; or any successor thereto acceptable to the Bank.
4. “Corruption Prevention Commission” means the Borrower’s commission established pursuant to Law No. HO-96-N, dated November 20, 2019.
5. “Deputy Prime Minister” means the Borrower’s Deputy Prime Minister.
6. “Drams” means the Borrower’s lawful currency.
7. “General Conditions” means the “International Bank for Reconstruction and Development General Conditions for IBRD Financing, Development Policy Financing”, dated December 14, 2018 (revised on August 1, 2020, December 21, 2020, April 1, 2021, and January 1, 2022).
8. “Government” means the Borrower’s Prime Minister, Deputy Prime Ministers and ministers.
9. “Justice Sector Reform Strategy means the Borrower’s 2022-2026 Strategy for Judicial and Legal Reforms, adopted pursuant to the Borrower’s Decision No. 1133-L of July 21, 2022.
10. “Law on Atmospheric Air Protection” means the Borrower’s Law No. H.O.-121, adopted on October 11, 1994.
11. “Law on Environmental Impact Assessments and Expert Appraisal” means the Borrower’s Law No. HO-110-N, dated June 21, 2014.
12. “Law on Mediation” means the Borrower’s Law No. HO-351-N, dated July 5, 2018.

13. “Law on Public Service” means the Borrower’s Law No. HO-206-N, dated April 9, 2018.
14. “Law on the Whistleblowing System” means the Borrower’s Law No. HO-97-N, dated January 1, 2018.
15. “Prime Minister” means the Borrower’s Prime Minister.
16. “Program” means: the program of objectives, policies, and actions set forth or referred to in the letter dated February 23, 2023 from the Borrower to the Bank declaring the Borrower’s commitment to the execution of the Program, and requesting assistance from the Bank in support of the Program during its execution and comprising actions taken, including those set forth in Section I of Schedule 1 to this Agreement, and actions to be taken consistent with the program’s objectives.
17. “Public Investment Committee” is the Borrower’s committee established pursuant to Decree No. 175-N, dated February 9, 2023, or any successor thereto acceptable to the Bank.
18. “Signature Date” means the later of the two dates on which the Borrower and the Bank signed this Agreement and such definition applies to all references to “the date of the Loan Agreement” in the General Conditions.
19. “Single Withdrawal Tranche” means the amount of the Loan allocated to the category entitled “Single Withdrawal Tranche” in the table set forth in Part B of Section II of Schedule 1 to this Agreement.
20. “STEM” means science, technology, engineering and math.